

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԸ

ԴՈՒԻՆԻ Բ. ԺՈՂՈՎՔԻ ՄԱՍԻՆ

(Շար. տես՝ Բազմ. 1957, թ. 5-6, էջ 111)

ԴՈՒԻՆԻ ԺՈՂՈՎՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Հրատարակելով Դուինի ժողովքի մասին պատմական յիշատակարան մը, ջանացինք լուսարանել նոյն ժողովքին վերաբերեալ քանի մը կէտեր. խօսեցանք ժողովքին պատմական աղբիւրներուն, շարժառիթին եւ թուականին մասին: Կը մնար խօսիլ նոյն ժողովքի գործերուն վերայ, ինչպէս մեր յիշատակարանը կը ներկայացնէ: Ահա անոր պատմածները. «Եւ ի բաց մերժեցին զժողովն Քաղկեդոնի նշովիւք չափ. յորում ամի եւ զգիրսն իսկ թարգմանեցին զՏիմոթէոսի երկրորդ քղթին մեկնութիւնն ի հայական բառ, եւ զՓիլիսոսին. եւ հակառակ Քաղկեդոնի ժողովոյն ճառս ոչ սակաւս կարգեցին: Գրեցին եւ զսրբասացութիւնսն զԽաչեցարդ կցուրդս ընդդէմակս նոցա բարժանմանցն զՔրիստոսի միաւորեալ բնութիւնսն»⁽³⁹⁾:

Համեմատենք հիմա մեր յիշատակարանի տուած տեղեկութիւնը՝ մեզի ծանօթ միւս աղբիւրներու տուած տեղեկութիւններուն հետ: Նախ տեսնենք Յաղագս Հայկական Իրաց կոչուած Անանուն պատմութիւնը: «Եւ հոս (Դուինի ժողովքին մէջ) նշովեցին Քաղկեդոնի սուրբ ժողովքը՝ իրբեւ Նեստորական, համաձայն Արդիւշի խօսքին: Որովհետեւ նոյն ատեն թարգմանեցին Արդիւշի բերած վերոյիշեալ Տիմոթէոսի եւ Փիլիքոս (այսպէս) ասորիի դրբերը, գրուած՝ Քաղկեդոնի մէջ եղած որոշումներու դէմ, եւ անոնց

դէմ՝ որ Քրիստոսի մէջ երկու բնութիւն կը դաւանին: Ու այդ դրբերով համոզուեցան եւ Դուինի նոյն ժողովքին մէջ որոշեցին՝ մէկ բնութիւն ըսել Աստուծոյ Բանը եւ մարմինը, եւ անմահ բնութեամբ խաչուած եւ մեռած: Ուստի Սուրբ Աստուածին վրայ աւելցուցին Որ Խաչեցարդ, համաձայն Պետրոս Թափիչի, որ Սաբելիոսի մոլորութենէն վարակուած էր»⁽⁴⁰⁾: Փոսի առ Զաքարիա Կաթողիկոս նամակն ալ նոյնը կը պատմէ հետեւեալ ձեւով. «Ընկալան նաեւ զԴիոսկորոս եւ զՓիլակսոն եպիսկոպոս ի Նաբուք քաղաքէ եւ զՏիմոթէոս Աղեքսանդրացին, որում Կուզն կոչեն, որ եւ զլրեանս թարգմանեցին ի հայս, որ կոչին յետին թարգմանիչը, որ ունի բազում չարախօսութիւն վասն ժողովոյն Քաղկեդոնի ի նոցին թարգմանութեանն. եւ ի նոցունց աւանդութենէն՝ մի բնութիւն աւանդեցին Քրիստոսի աստուածութեանն եւ մարդկութեանն, եւ զԽաչեցարդ եղին յերիս սրբասացութիւնսն՝ հակառակ կարծելով ժողովոյն Քաղկեդոնի»⁽⁴¹⁾: Իսկ Վրաց կաթողիկոսը, Արսէն Սափարացին կ'ըսէ. «Եւ կրկին նշովեցին նոյն սուրբ ժողովք Քաղկեդոնի, որ կոչեցին Նեստորական՝ համաձայն անաստուած Արդիւշի, եւ նոյն թուին՝ երեւան հանեցին մեկնողական դրութիւնն Տիմոթէոս եւ Փիլիքսենոս հերձուածողներու, որոնք ասորի էին, եւ առաջինները եղան որ գրեցին Քաղկեդոնին եւ Քրիստոս Աստուծոյ երկու բնութիւնն ընդդիմադրելու մասին, եւ Կուզի

39. «Բազմ.», 1957, էջ 113, տող 46-51:

40. Garitte, La Narratio, p. 35-36 (n° 70-73).

41. Հմմտ. Garitte, La Narratio, p. 134, ուր մէջ բերուած հատուածը կը զտնուի:

գրուածքին ստորագրուեցին իրենց իսկ մեռցնելու համար եւ ասացին Մի բնութիւն Բանին Աստուծոյ եւ մարմնոյ եւ անմահական բնութեամբ խաչեցեալ եւ մեռեալ Քրիստոս քարոզեցին, այսինքն Խաչեցեալ աւելացրին Սուրբ Աստուծոյ մէջ, որ է Խաչեցար, համաձայն Պետրոս Անտիոքացոյ, որ Սաբելիոսի ախտով էր վարակուած»⁽⁴²⁾:

«Սակա ժողովոյց որ եղեն ի Հայք» դրութիւնն ալ պահած է Դուինի ժողովքի մասին հետեւեալը. «Զայս ժողով արար Տէր Ներսէս հակառակ ժողովոյն Քաղկեդոնի, վասնզի էր ախտ պղտորման խոստովանութեան Քաղկեդոնի յաճախապէս յաւելեալ եւս քան զեւս յոյժ յոյժ երկաբնակ հաւատն, եւ սկզբնաւորեալ Տէր Ներսէս սահմանադրութիւնսն ձօն տալով, եւ եղեալ միաւորութիւն խոստովանութեան, հաստատելով նախ առաջին զճննդեանն եւ զմկրտութեանն միաւորելով յոյժ ստիպմամբ հաստատութեամբ անխղիւ ի անորոշարար կանոնաւ վասն երկուց բնութեանցն միաւորելով զմիութիւն ունելով: Սրբեցին դարձեալ զԽաչեցարն յերիս սրբասացութիւնսն, ընդդէմ բաժանմանց նոցա վասն Քրիստոսի միաւորեալ բնութեանցն»⁽⁴³⁾: Հուսկ Կալանոսէ օգտագործուած դաւադանադիրքը վերի աղբիւրին նման կը պատմէ. «Սա (Տէր Ներսէս) արար ժողով ի Դվին հրամանաւ արքային Պարսից վասն բաժանման ի Յունաց: Եւ զտօն ծննդեանն եւ զմկրտութեանն ի միում աւուր ասաց առնել, ասելով թէ որպէս Քրիստոս Աստ-

ուած եւ մարդ էր միաւորեալ, միաւորեալ պարտ է առնել զճնունդն եւ զՄկրտութիւնն ի միում աւուր, եւ ոչ տօնել յայլ եւ յայլ օր: Եւ յաւել յերեքսրբեանն զԽաչեցարն»⁽⁴⁴⁾:

Ահա այս բոլոր վկայութիւններուն մէջ Դուինի ժողովքին կը վերագրուին հետեւեալ գործերը. 1) Քաղկեդոնի ժողովքին մերժումը. - 2) Տիմոթէոս Կուզի եւ Փիլիքսէնի գրութեանց թարգմանութիւնը՝ ուրիշ հակաքաղկեդոնական գործերու հետ. - 3) Ս. Աստուածին վրայ Որ Խաչեցարի յաւելումը. - 4) Ծննդեան եւ Մկրտութեան տօներու միացումը: Վերջինը յիշուած է միայն երկու յետին վկայութիւններուն մէջ, եւ մեր յիշատակարանին մէջ անոր մասին ոչինչ կայ:

Այս վկայութիւններու զիմաց՝ կան Գիրք Թղթոցի մէջ պահուած Դուինի ժողովքի Պաշտօնական թուղթը⁽⁴⁵⁾ եւ Ներսէսի ու Ներչապուհ Եպիսկոպոսի անուանով հասած կանոններու խումբը⁽⁴⁶⁾, որոնց մէջ վերի վկայութիւններուն տուած տեղեկութիւններէն ոչ մէկը կայ: Ասկից է որ ներկայ պատմագէտներու մօտ ալ երկու հակոտնեայ կարծիքներ կը տիրեն Դուինի ժողովքին գործերուն նկատմամբ, մանաւանդ Քաղկեդոնի ժողովքը մերժում թէ ընդունում ըլլալու հարցին շուրջ: Այսպէս մէկ կողմէն Ե. Տէր Մի-նասեան եւ Կ. Վ. Տէր Մկրտչեան⁽⁴⁷⁾, Տէր Միքէլեան⁽⁴⁸⁾, Թուոնըպիլ⁽⁴⁹⁾ Դուինի Բ. ժողովքին կը վերագրեն հակաքաղկեդոնական բնոյթ. միւս կողմէ Զամ-չեանի⁽⁵⁰⁾ եւ Հացունի⁽⁵¹⁾ հետ Օրման-

42. Մեկիքսէթ-Բեկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, Ա. էջ 40:

43. Գիրք Թղթոց, էջ 221:

44. Galanus, Conciliationis Ecclesiae Armenae, I, p. 85.

45. Գիրք Թղթոց, էջ 72-75:

46. Ղլտեան, Կանոնադիրք Հայոց, Թիֆլիզ, 1914, էջ 107-116:

47. Տիմոթէոսի եպիսկոպոսական Աղեքսանդրիոյ Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովն Քաղկեդոնի, (Հրտ. Տէր Մկրտչեան եւ Տէր

Միմասեանց), Էջմիածին, 1908, յառաջաբան, էջ XV:

48. Տէր Միքէլեան, Հայոց եկեղեցին եւ Բիւզանդական ժողովոյց պարագայքն, Մոսկուա, 1892, էջ 108:

49. Tournebise, Histoire politique et religieuse de l'Arménie. Paris, 1910, p. 90.

Թուոնըպիլ, Հայաստան եւ հայ եկեղեցական պատմութիւն, Վենետիկ, 1930, էջ 33:

50. Զամչեան, Պատմութիւն Հայոց, Բ. էջ 237-239:

51. Հացունի, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ

եան⁽⁵²⁾ և Լեւոնի թանգեան⁽⁵³⁾ այդ մի-
եանոյն ժողովքին մէջ քաղկեդոնական
հարց չեն տեսներ:

Խնդիրը լուծելու համար՝ հարկ է եր-
կու կողմի վկայութիւններն ալ նկատի
առնել: Ուստի ղենեք հարցը: Ներսէսի
գումարած ժողովքը մերժեց Գաղկեդոնի
ժողովքը՝ թէ ոչ:

Տեսանք նախապէս թէ Ներսէս, Դուրինի
մէջ, ոչ թէ մէկ՝ այլ երկու ժողովք գու-
մարած է. մէկը՝ Արքիւշոյ ասորին ձեռ-
նադրելու համար 551ին, իսկ միւսը՝
Խուսիկ Նեստորականներու դէմ 555-
ին⁽⁵⁴⁾: Ասկից՝ «Գիրք թղթոց»ի մէջ եր-
կու տեսակ վաւերացութիւն ունինք:
Նախ ասորիներու նամակը՝ ուղղուած
Ներսէսին, և Ներսէսի պատասխանը⁽⁵⁵⁾,
որոնք կը վերաբերին Ա. ժողովքին: Յե-
տոյ, 555ի ժողովքին պաշտօնական վճիռ-
ը, Ուլստ միաբանութեան խորա-
գրով⁽⁵⁶⁾: Եթէ առաջին վաւերացութիւնը
ձեռք առնենք՝ յայտնի կը տեսնենք որ
Ներսէս հոն բացայայտ կերպով մերժած
է Գաղկեդոնի ժողովքը: Մինչ երկրորդ
վաւերացութիւն մէջ, այն է Ուլստ միաբա-
նութեան, Գաղկեդոնի դէմ ոչ մէկ ար-
տայայտութիւն կը գտնենք, այլ կը տես-
նենք թէ ժողովքը ուղղակի և անմիջա-
կան կերպով Խուսիկ Նեստորականներու
դէմ եղած է, որոնք Հայաստան եկած ու
հաստատուած էին և իրենց աղանդին
ծաւալման գործունէութիւնն սկսած: Ժո-
ղովքը խիստ միջոցներ ձեռք կ'առնէ այս
նեստորական շարժումին առջեւ առնե-
լու, քանդելով անոնց ժողովարանը և
խիստ պատուէր տալով՝ որ ոչ ոք անոնց
հետ հաղորդակցութեան մտնէ: Ժողովա-
կան այս պաշտօնական վճիռն մէջ դր-
ուար է քաղկեդոնականութեան դատա-
պարտութիւն գտնել: Որովհետեւ այս ժո-
ղովքն նպատակը աւելի գործնական և

կարգապահական խնդիր մըն էր, ուղ-
ղուած՝ որոշ աղանդաւորներու դէմ, ո-
րոնք իրր զուտ նեստորականներ՝ չէին
կրնար Գաղկեդոնականներու հետ շփոթ-
ուիլ: Եւ քաղկեդոնական համոզումներ
ունեցողներն ալ կրնային և պէտք էին
դատապարտել զանոնք: Այնպէս որ եթէ
այս վաւերացութիւնը միայն ունենայինք
մեր ձեռքը, դժուար պիտի ըլլար ըսել թէ
Ներսէս մերժած ըլլայ Գաղկեդոնի ժո-
ղովքը, կամ թէ ինքը հակաքաղկեդոնա-
կան մըն էր:

Սակայն խնդիրը բոլորովին տարբեր է
Դուրինի 551ի ժողովքին նկատմամբ, որ
գումարուեցաւ Արքիւշոյ ասորին ձեռնա-
դրելու համար: Վասնզի Արքիւշոյ ասո-
րին, ինչպէս կ'ըսեն պատմական վկայու-
թիւնները, և ինչպէս կը տեսնուի իր նա-
մակին և զրութիւններու մէջ⁽⁵⁷⁾, յայտ-
նի հակաքաղկեդոնական մը և Յուլիանոս
Հաղիկաոնացիի հետեւորդ մըն էր: Ուս-
տի անոր ձեռնադրութեան հարցը պարզ
իրաւական կամ ծիսական խնդիր մը չէր,
այլ հետը կը բերէր դաւանական խնդիր
ալ: Որովհետեւ առանց դաւանակցու-
թեան՝ կարելի չէ ըմբռնել որ Հայերը
(գոնէ այն դարերուն) յանձն առնէին
ձեռնադրել Արքիւշոն: Եւ իսկապէս Արքի-
ւշոյ հետը բերած էր իր համայնքին հա-
ւատոյ դաւանանքը, և Ներսէս իր ժո-
ղովքով կը վաւերացնէր զայն ըսելով.
«Չայդ ամենայն հաւատ ստուգելու լուեալ
զհաստատուն», և «ճշմարիտ գտաք ըզ-
ձեզ հաւատով», որով «Հնազանդեցաք և
հաւանեցաք հրամանի ձերում և վկայու-
թեամբ ձերով ձեռնադրեցաք զայրդ ըն-
տրեալ ի ձեզ գլխաւոր»⁽⁵⁸⁾:

Արդ Արքիւշոյի հաւատոյ դաւանանքին
մէջ աչքի կը զարնէ անոր Յուլիանոս Հա-
ղիկաոնացիի հետեւորդ մը ըլլալը. վա-
սնզի Յուլիանոսի համաձայն կ'ըսէ. «Զի

մարմին որ ի ձեզէ առաւ՝ անապականու-
թիւն էր և փառաւոր ի նմանէ միութենէ,
և նովին մարմնով յարեաւ և նստաւ ընդ
աջմէ Հօր»⁽⁵⁹⁾: Ու այդ պատճառաւ՝ հե-
րետիկոսներու շարքին կը նդովէ նաեւ
«զՍեւերոս և զԳլիւս ապականու-
թեան»⁽⁶⁰⁾, որ թէեւ հակաքաղկեդոնա-
կան մըն ալ ան էր, բայց Յուլիանոսի հետ
վճի մտած և հակառակորդ մը եղած էր
Քրիստոսի մարմնին ապականութեան
հարցին շուրջ: Ասկից յուլիանիստները՝
համաձայն ըլլալով հանդերձ սեւերական-
ներու հետ՝ քաղկեդոնականութիւնը դա-
տապարտելու մէջ, կը նդովէին զինքը:
Յետոյ Արքիւշոյ Նեստորի և անոր հա-
մախոհներու շարքին՝ կը նդովէ յանուանէ
նաեւ Գաղկեդոնի ժողովքը և Լեւոնի
Տումարը⁽⁶¹⁾, թէեւ զԵւտիքոսն ալ, որ
Գաղկեդոնի ժողովքէն դատապարտուած
բուն միաբնեայ հերետիկոսն է: Նոյնը
կ'ընէ Ներսէս իր պատասխանին մէջ⁽⁶²⁾,
այնպէս որ տարակոյս չի կրնար մնալ թէ
Ներսէս ալ յայտնի և որոշ կերպով մեր-
ժած է ու նդոված է Գաղկեդոնի ժողովքը
և Լեւոնի Տումարը:

Ի՞նչ ըսելու է այն ատեն հակառակ
կարծիքը պաշտպանողներուն, որոնց մէջ
վերջինը ըլլալով Հ. Վ. Հացունին, իր
ըսածները միայն նկատի պիտի առնենք:
Պէտք է ըսել թէ անոնք իրաւունք ունին՝
եթէ միայն 555ի ժողովքի վճիռը նկատի
առնուի: Այսպէս Հացունի՝ հաստատուած
այդ վճիռին վրայ՝ ճիշտ կ'ըսէ թէ «Այդ
ժողովքին մէջ ոչ մէկ խօսք կամ ակնար-
կութիւն կայ Գաղկեդոնի դէմ»⁽⁶³⁾: Բայց
սխալ կ'ըզրակացնէ թէ «Մեր վաւերական
յիշատակարանը անբաւական են հաստա-
տելու թէ Հայք Աշտարակեցւոյն օրով կամ
յառաջ արդէն պաշտօնապէս դատուած
էին միւս եկեղեցիներէն»⁽⁶⁴⁾: Հ. Վ. Հա-
ցունի տեսած է և նկատած Ներսէսի պա-

տասխանը Ասորիներու ուղղուած, ուր
Գաղկեդոնի ժողովքը և Լեւոնի Տումարը
հերետիկոսներու շարքին նդովուած են:
Սակայն ինք կը տարակուսի անոնց վա-
ւերականութեան: Ահա այս կէտին մէջ կը
հեռանանք իրմէ, վասնզի եթէ նոյնիսկ
եկամուտ ըլլային այդ անունները Ներ-
սէսի նամակին մէջ, ինչպէս ինք կը հա-
մարի, բաւական էր Արքիւշոյի ներկայու-
թիւնը՝ ըսելու համար թէ Ներսէս և ա-
նոր ժողովքը վաւերացնելով Ասորիներու
դաւանանքը՝ Գաղկեդոնի հակառակորդ-
ներու կողմը բռնած են: Ուստի ոչ մէկ
պատճառ կը տեսնեմ տարակուսելու Գաղ-
կեդոնի և Լեւոնի անուններու յիշատա-
կութեան՝ Ներսէսի նամակին մէջ՝ հերե-
տիկոսներու շարքին: Նոյն հերետիկոսնե-
րու շարքին յիշուած են նաեւ Թէոդորոս
և Իբաս, որոնք Գաղկեդոնի ժողովքին
մէջ արդարացած էին իրր ուղղափառ-
ներ⁽⁶⁵⁾, և այդ իսկ պատճառաւ հակա-
քաղկեդոնականները զօրաւոր պատճառ
առին Գաղկեդոնի ժողովքը Նեստորական
անուանելու: Ուստի աւելորդ է տարակու-
սիլ Գաղկեդոնի և Լեւոնի անուններուն
յիշատակութեան վաւերականութեան մա-
սին: Առանց այդ անուններու ներկայու-
թեան ալ՝ Ներսէսի նամակը ընդունելով
հակաքաղկեդոնական ասորիներու դաւա-
նակցութիւնը՝ յայտնապէս կը բնորոշէ
իր դիրքը:

Ասկից կը հետեւի թէ մեր յիշատակա-
րանին խօսքն ալ «Եւ ի բաց մերժեցին
զժողովն Գաղկեդոնի նդովիւք չափ» ունի
պատմական հիմ, և կը պատշաճի առա-
ւելապէս Արքիւշոյի ձեռնադրութեան հա-
մար գումարուած ժողովքին:

Յունական և վրացական աղբիւրները
ուրիշ պարագայ մըն ալ կը մատնանչեն
Ներսէսի Գաղկեդոնի ժողովքը մերժելուն
նկատմամբ. այսինքն՝ թէ Ներսէս մերժեց

պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 377-378:
52. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլս, 1912,
Ա. էջ 550:

53. Մելիք Թանգեան, Հայոց եկեղեցական իրա-
ւունքը, Եւրոպ, 1903, էջ 367:

54. Հմմտ. «Բազմ», 1957, էջ 121:

55. Գիրք Թղթոց, էջ 52-54, 55-58:

56. Գիրք Թղթոց, էջ 72-75:

57. Գիրք Թղթոց, էջ 59-69:

58. Գիրք Թղթոց, էջ 57-58:

59. Գիրք Թղթոց, էջ 53: Հմմտ. էջ 64, 68:

60. Գիրք Թղթոց, էջ 53: Հմմտ. էջ 67:

61. Գիրք Թղթոց, էջ 53: Հմմտ. էջ 67:

62. Գիրք Թղթոց, էջ 56-57:

63. Հացունի, Կարեւոր խնդիրներ, էջ 378:

64. Հացունի, Անդ:

65. Կ. Պոլսոյ Բ. ժողովքը (553) հակաքաղկե-
դոնականներու մասամբ գոհացում տալու հա-
մար դատապարտեց Թէոդորոսի և Իբասի
ինչ ինչ գործերը:

Քաղկեդոնի ժողովը իբր նեստորական համաձայն Արքիշոյի: Իսկապէս ալ «Գիրք Թղթոց»-ի մէջ պահուած, Արքիշոյ եպիսկոպոսի երկու դաւանական զրուցութիւններու մէջ կը գտնենք հետեւեալ նշումը. «Նշումք զժողովն Քաղկեդոնի եւ զԾումարն Լեւոնի՝ զի ասացին երկուս ընդ թիւս եւ երկուս զէմս Քրիստոսի յետ միաւորութեան»⁽⁶⁶⁾, բան մը որ ճշմարտութեան չի համապատասխաներ, վասն զի Քաղկեդոնի ժողովին մէջ որոշուեցաւ «Զմի եւ զնոյն Քրիստոս, Որդի, Տէր, Միածին յերկուս ընդ թիւս», բայց «Ի մի զէմ եւ ի մի ենթակայութիւն ընթակեցեալ: Ոչ յերկուս զէմս որոշեալ»⁽⁶⁷⁾: Այս բանը մեր յիշատակարանն ալ դիտէ եւ կ'ըսէ «Վասն զի զէմս ոչ երկուս ըստ Նեստորի իմացմանցն, այլ մի կարգեցին ասել»⁽⁶⁸⁾: Ուստի Արքիշոյի տուած անձիւն բացատրութեան համաձայն՝ Քաղկեդոնի ժողովը կատարեալ նեստորական դաւանանքը որդեգրած էր, եւ իր այս համոզումը ընդունելի ուղեց ընել հայ եպիսկոպոսներուն: Արդէն Նեստորականներն ալ այդ կը քարոզէին՝ թէ Քաղկեդոնի մէջ իրենց տեսակէտը յաղթանակած էր⁽⁶⁹⁾: Ասկից հոգեբանօրէն սպասելի էր որ հայ եկեղեցականութիւնն ալ՝ որ այնքան բռն կերպով նեստորականութեան զէմ պայքարած էր, մերժէր նաեւ Քաղկեդոնի ժողովը:



Սակայն երկու հարցում կը ներկայանայ զեռ մեր մտքին: Ի՞նչպէս եղաւ որ հայ եկեղեցականութիւնը ընդունեցաւ Արքիշոյի բերած նոր դաւանական կարծիքը, եւ թէ չեղա՞ն ընդդիմադիրներ այդ հոսանքին դէմ:

1. — Առաջին հարցին պատասխան մը կու տայ մեզի «Յաղագս Հայկական Իրաց» կոչուած աղբիւրը, երբ կը պատմէ

թէ ինչպէս Ներշապուհ Տարօնի եպիսկոպոսին եւ Արքիշոյ ասորիի միջեւ զոյու-թիւն ունէր երկար ու մտերիմ բարեկամութիւն, որով երբ Արքիշոյ ձեռնադրու-թիւն ընդունելու համար Հայաստան դի-մեց, Տարօնի եպիսկոպոսին ձեռքով իր խնդիրը ներկայացուց, եւ Ներշապուհ եպիսկոպոս անձամբ տեղեկացուց Ներսէս կաթողիկոսին եւ իշխաններուն՝ ասորի-ներու խնդրանքը: Արդ, նկատած Ներշա-պուհի մեծ ազդեցութիւնը, որ ունէր հայ եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ, ինչ-պէս նախապէս ակնարկեցինք⁽⁷⁰⁾, Արքի-շոյի խնդիրը յաջողութիւն գտաւ: Վա-սընդի Ներշապուհ իբր Տարօնի եպիսկո-պոս՝ կաթողիկոսէն վերջ առաջին աթոռը կը գրաւէր. յետոյ Բաբէն կաթողիկոսի ժամանակ եպիսկոպոս ձեռնադրուած (506ին)՝ մինչեւ Ներսէսի օրերը՝ յիսուն տարուան պատկանելի գործունէութեան շնորհիւ մը ունեցած էր, որով իր հեղինա-կութիւնը շատ մեծ ըլլալու էր հայ եկե-ղեցւոյ նուիրապետութեան մէջ: Ներշա-պուհի բարեկամութիւնը Արքիշոյ ասորիի հետ՝ ցոյց կու տայ թէ Տարօնի եպիսկո-պոսը կը հովանաւորէր մերձակայ ասո-րիներու եկեղեցիին մէկ անջատուած մա-սը եւ լաւ յարաբերութիւններու մէջ էր անոնց հետ: Անշուշտ ուսումնական եւ մշակութային յարաբերութիւններ ալ կա-յին, որմէ դիւրին պիտի ըլլայ հետեւցնել նաեւ գաղափարախօսական ազդեցութիւն: Այս պայմաններու տակ՝ կարելի է բա-ցատրել թէ ինչպէս Ներշապուհի ազդե-ցութեամբ հայ եկեղեցւոյ նուիրապետու-թեան մեծամասնութիւնը հաւանեցաւ Ար-քիշոյի ձեռնադրութեան եւ ընդունեցաւ անոր հաւատոյ դաւանանքը: Անշուշտ են-թադրելու ենք նաեւ թէ Ներշապուհ եւ ի-րեն համախոհ եպիսկոպոսները նախապէս ալ ունէին Քաղկեդոնի հանդէպ ժխտա-կան դիրք: Բայց Բաբէնի գումարած ժո-

ղովին մէջ անոնք ընդունելով Զենոնի Հենոտիկոնը, Քաղկեդոնի ժողովին դէմ բացայայտ հակառակութիւն չէին ցոյց տար, եւ կրնային համաձայնիլ քաղկեդո-նականներու կողմնակիցներուն հետ, ո-րոնք նոյն Հենոտիկոնը ընդունած էին: Միւս կողմէն յունաց հետ դաւանակից ըլ-լալու սկզբունքին յարած էին, մինչեւ որ Յուստինոս կայսրը դահ բարձրանալով (518ին) բացայայտ կերպով ընդունեցաւ Քաղկեդոնի ժողովը, եւ հալածեց կայս-րութեան սահմաններէն հակաքաղկեդո-նականները: Այս շրջանին՝ հայ եկեղե-ցին ալ պէտք էր իր դիրքը որոշել, կամ յոյներու հետ դաւանակցութեան սկզբ-ունքին հաւատարիմ մնալով՝ ընդունիլ Քաղկեդոնի ժողովին հեղինակութիւնը, կամ մերժելով Քաղկեդոնի ժողովը՝ հե-ռանալ յոյներու հետ դաւանակցութենէն: Ներսէսի գումարած ժողովին մէջ տե-սանք թէ հայ եկեղեցւոյ նուիրապետու-թեան մեծամասնութիւնը այս երկրորդ կողմը ընտրեց: Բայց յոյներու դաւանակ-ցութենէն հեռանալու գաղափարը այնքան բացարձակ չէր սկզբնական շրջանին, այն-պէս որ Յովհաննէս Գաբղեան՝ յաջորդը Ներսէսի եւ մասնակցողներէն մին Դուինի ժողովներուն, Քաղկեդոնի դէմ պայքարե-լով հանդերձ, երբ Պոլիս փախչելու պար-տաւորուեցաւ, հոն Կայսեր առջեւ Քաղ-կեդոնի ժողովը ընդունեցաւ եւ յոյներու հետ հաղորդակցեցաւ⁽⁷¹⁾: Նոյնը յաջորդ շրջաններուն զանազան կաթողիկոսներ յանձն առին ընել: Մինչդեռ նեստորակա-նութեան նկատմամբ նոյնը երբեք ըրած չեն, եւ չեմ կարծեր թէ ամենատիպողա-կան պարագաներու տակ յանձն առնէին ընել, հակառակ որ պարսկական պետու-թիւնը իր նեստորական հպատակներուն նպատաւոր էր, եւ հայեր անոր իշխա-նութեան ենթակայ էին:

2. — Երկրորդ հարցին թէ արդեօք չե-ղա՞ն ընդդիմադիրներ՝ Դուինի ժողովին

որոշումներուն, պատասխան մը կու տան մեզի «Գիրք Թղթոց»-ի մէջ պահուած ժա-մանակակից քանի մը նամակներ: Ասոնց մէջ նշանաւոր է Ներսէսի մեղադրութեան թուղթ կոչուածը, ուղղուած Հայաստանի ինը եպիսկոպոսներու, որոնք չէին եկած Դուինի Ա. ժողովին, զոր մենք կը հա-մարինք Արքիշոյի ձեռնադրութեան հա-մար գումարուած: Այս եպիսկոպոսները հետեւեալներն են. Գրիգոր Արծրունեաց, Սահակ Ռշտունեաց, Սողոմոն Մոկաց, Ստեփանոս Անճեւեցեաց, Հոռոմանոս Ա-կիոյ, Քրիստափոր Պալունեաց, Միքայէլ Զարեհաւանից, Աստուածատուր Բզնու-նեաց, Թադէոս Մեհնունեաց: Ամէնքն ալ Վասպուրական նահանգի, կամ Հայաս-տանի հարաւային սահմանադուրի եպիս-կոպոսներ:

Ի՞նչ պատճառի համար չեկան այս ե-պիսկոպոսները ժողովին մասնակցելու: Ներսէս կաթողիկոս անոնց ծուլութեան կամ անհոգութեան կը վերագրէ այդ՝ ը-սելով. «Եւ ձեր ոչ ունելով զնախանձ վա-սըն Աստուծոյ հեղապեալ սպուտեցէք, եւ ի ձեր առնելոյ՝ բազում գործ եկեղեցւոյ մնաց»⁽⁷²⁾: Այս մեղադրութեան նամակէն վերջ՝ ինը եպիսկոպոսներէն երեքը, այն է Գրիգոր Արծրունեաց, Քրիստափոր Պա-լունեաց եւ Թադէոս Մեհնունեաց, Դուինի 555ի ժողովին կու գան եւ Ուլիս միա-բանութեան թուղթին կը ստորագրեն, բայց մնացած վեցը հոս ալ բացակայ են: Ներսէս կաթողիկոս գեռ ժողովէն վերջ նոյն ժողովի որոշումները գործադրել տալու ետեւէ է, եւ Գրիգոր Մարգարետա-կան եւ Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս-ներու հրահանգ կը զրկէ որ իրենց շրջանի վանքերուն եւ քահանաներուն ալ հասցնեն Դուինի ժողովին որոշումները: Այս ա-մէնը ցոյց կու տան թէ Հայաստանի մէջ, մասնաւորապէս անոր հարաւային սահ-մաններուն վրայ, Դուինի ժողովին որո-շումները հանդիպած էին դիմադրու-թեան: Բայց թէ ի՞նչ էր դիմադրութեան

66. Գիրք Թղթոց, էջ 67:

67. Սկզբնաղբի տոմարի սրբոյն Լեւոնի եւ Սահ-մանը Ս. ժողովոյն Քաղկեդոնի, Վենետիկ, 1805, էջ 42/43:

68. «Բագմ.», 1957, էջ 112, տող 32:

69. Tixeront, Histoire des dogmes, Paris, 1922, t. III, p. 98.

70. Հմմտ. «Բագմ.», 1957, էջ 116, ծան. 19:

71. Johannis Ephesini, Historia Ecclesiastica, pars tertia (Louvain, 1952), p. 62 (cap. XX).

72. Գիրք Թղթոց, էջ 70:

ԲԱՐԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

(ԷՁ ՄԸ ՄԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԵՆ)

(Շար. տե'ս «Բազմավեպ», 1958, թ. 1-2, էջ 9)

2. - ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

Բարակը ձեռք բերող եւ արարներուն յանձնողը եղաւ այս Սահլ Իպն Սնբատը։ Աճառեան իր Անճառնուհներու բառաբանին մէջ՝ թիւ 2 ՍԱՀԼԻ մասին կը գրէ։ «Որդի Սմբատ խոստովանողի, եղբայր Աշոտ Ա.ի, յաղթեց եւ բռնեց Բարան պարսիկին»։ Աճառեան նոյն գործին 36րդ Սմբատի մասին խօսած ատեն՝ զայն կը կոչէ «Առանշահիկ քաջ իշխան Աղուանից, յաղթեց Բարան պարսիկ իշխանին»։

Տարակոյս չկայ որ վերը յիշուած երկու Բարաններն ալ նոյն Բարակն է։ Աճառեան շիթութեան զոհ դացած է։ Սահլ Իպն Սնբատ էր կրնար ըլլալ եւ էր որդին Սմբատ խոստովանողին, որ Բազրատունի էր։

Կաղանկատուացի կը վկայէ որ «ի լնուլ երկերիւր եօթանասուն թուոյ հայոց (821) ելին զաղտնարար ի Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց եւ ի յաւարի առին զԱմարաս դաւառ՝ զերի առեալ իբրեւ ողիս

րած էր խուժիկ նետորականներու դէմ։

Ուստի յայտնի է որ Աղուանից աշխարհին մէջ ինչպէս եւ Սիւնիքի մէջ ո'չ թէ նետորականութեան՝ այլ Քաղկեդոնի յարողներն են որ ներսէսի դամարած ժողովքին որոշումները կը մերժեն, եւ Յովհաննէս Գաբրիելանի զրկած պատգամաւորները ետ կը ճամբեն։ Հետեւեալը եղբակացնելու է որ՝ թէեւ ներսէս կաթողիկոս Աբդիշոյի աղբեցութեան տակ որդեգրեց հակաքաղկեդոնական դերքը, բայց հայ եկեղեցւոյ մէջ եւ շուրջը եղան ընդդիմադիրներ։

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

(Շարունակելի)

հաղարս, եւ ի Մեծիրանց սահմանի ամբարացեալք՝ ի տեղւոյն որ կոչի Շիկաքար։ Յայնժամ արի եւ չքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ քաջազոր եղբարբք իւրովք եւ զօրօք ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիմաւալ զնոսա ցիրուցան կացուցանէին, եւ որպէս յառիւծոյ ժանեաց զգրեալսն ի բաց կորդին» (էջ 374)։

Սաիլ կամ Սաիլ Սմբատեան նոյն անձերն են, որուն արար պատմիչները Սաիլ իպն Սնբատ կոչումը կու տան։ Իրապէս Սմբատի մը որդի՞ն էր այս Սահլը՝ թէ պարզապէս Սմբատեան տոհմի պատկանելուն համար իպն Սնբատ, կամ ըստ հայոց՝ Սմբատ կը կոչուէր։ Առ այժմ վերջնականապէս կարելի չէ ըսել։

Սահլի Սմբատեան կամ Սահլ Սմբատեան այսպէս կը յայտնուի 821ին։ Կաղանկատուացի զայն կը կոչէ արի եւ շքեղատեսակ, անոր քաջ եւ զեղեցկակազմ ըլլալուն համար անտարակոյս։

821ին Պարտաւի կողմէն Տաճիկներ աւարի կ'առնեն Ամարասը՝ Ախցնեաց վարանդա դաւառին մէջ (Մուղանի դաշտ), եւ ասպատակները հաղարի մօտ գերիններով Մեծիրանց սահմաններուն մէջ՝ Շիկաքարի մէջ կ'ամրանան։

Ո՞վ էին այս ասպատակները։ Կաղանկատուացի զանոնք արք ընտիրք ի Տաճկաց կը կոչէ, Պարտաւի կողմերէն։ Նախ ուրեմն անոնք Արարներն էին։ Պէտք է նշեալ որ այս Տաճիկները պարզապէս ասպատակներ էին, եւ ոչ թէ նուաճող բանակ։ Իրապէս կարելի է զանոնք նոյնապէս ի Բարակի հետեւող աղանդաւորներուն։

Բար Հերրայուս խօսելէ վերջ 829 թուի

դէպքերու մասին՝ կը գրէ. «Այս ատեն Քուրտանիէի ժողովուրդը, որոնք Մուսլիմաններ էին, ասպատակեցան Արարներուն դէմ, որովհետեւ իրենց երեւցած էր թագաւոր մը, (երկար) ատեն ակնկալուած Մահդին։ Այս մարդը իր երեսին քող մը ձգած՝ զայն ծածկելով, ինքզինքը կը կոչէր Քուրտուս եւ Սուրբ Հոգի։ Մարդոց բազմութիւն մը հաւաքուեցան իր շուրջ, եւ ան բանակաւ մը ամբարացուց Բարտէվայի երկրին լեռներուն մէջ։ Եւ նոյնիսկ Մամուն (Արարացւոց խալիֆան, Յ. Ք.) կը դողար իրմէ. եւ ան զրկեց Հասան, բանակին հրամանատարը, անոր դէմ, եւ Հասան կալանաւորեց Տուր-Արդինի մէջ, մինչ ան Կարտամինի վանքը կը կողոպտէր։ Եւ Քուրտանայանները կոտորուեցան, եւ Մահդին փախաւ Իսաակ Բար-Ահուտի, Հայուն երկիրը։ Եւ Իսաակ բռնեց զայն եւ զուլսը կտրեց»։ Յետոյ Քուրտանցիները հաւաքուեցան միատեղ դարձեալ, եւ բանակեցան Իսաակի բերդին դիմաց, մինչ ան կը պատրաստուէր դուրսը։ Եւ անոնք որ բերդին մէջ էին մեծապէս կը դողային (վախէն)։ Յետոյ երբ Իսաակի կնոջ վանական եղբայրը տեսաւ որ Քուրտանայանները բերդ մտնելու վերայ էին, նիզակ մը առաւ եւ պարիսպէն վար նետուելով, եւ ուղղակի Քուրտանայաններու գլխաւորին յառաջանալով, իր նիզակը անոր մէջ մխրձեց եւ սպանեց զայն, եւ ան զնաց (ետ) բերդին մէջ խաղաղութեամբ (այսինքն անվնաս)։ Եւ երբ զաղութեամբ (այսինքն անվնաս)։ Եւ երբ երկուց եղաւ անոնք որ բերդին մէջ էին ուրիշ յոյս չունէին բացի լալէ եւ խոնարհ կերպով Աստուծոյ աղօթելէ՝ որպէսզի ան զիրենք փրկէ։ Եւ բարեպաշտ կինը, Իսաակի կողակիցը, բոլոր զիշերը անցուց որդին, որ ծծկեր էր, Աստուծոյ յանձնելով, իր ծովին եւ արցունքով։ Եւ այն ատեն արշալոյսին Իսաակ հասաւ իր քաջ զինուորներով։ Եւ Քուրտանայանները, որոնք իրենց կռնակը դարձուցած էին փախչելու համար, արգիլուեցան ձիւնին պատճառաւ։ Եւ այս կերպով անոնց մեծազոյն մասը ընաճնջուեցան եւ սպանուեցան, եւ

քիչեր՝ որոնք ազատեցան՝ առաջնորդ մը ընտրեցին Հարուն անունով եւ Ալի զայն սպանեց։ Եւ անկէ վերջ (բարձրացաւ) Բարէկ, ջորեպան մը»։

Բար Հերրայուսի վերի վկայութեան առաջին մասը անտարակոյս կը վերաբերի Բարակի արարներէն պարտութեան, Հայաշխարհ ապստաններուն եւ Սահլէ բռնուելուն։ Սակայն նոյն այս պատմութիւնը Բար Հերրայուս, այսինքն Բարակի վախճանը, կը պատմէ իր գործին մէջ 837 տարւոյն դիմաց ըսելով. «Երբ Բարակ, խառնաղմիկ ապստամբը, տեսաւ որ իր կուսակիցները անգոր են, իր դրամները բեռցաւ (զրաստներու) եւ իր մարդոցմէն չորս հարիւրին հետ փախաւ դէպի Հոռոմաց երկիրը։ Եւ երբ Հայաստան հասաւ, որոշ ազնուական մը՝ որուն անունը Էսթէֆանա էր, զինքը շողմեց եւ զինքը իր տունը տարաւ իբր թէ անոր պատիւ ընելու, սակայն անոր երկաթ կապանքներ զարկաւ։ Եւ երբ Մուսաղիմ իմացաւ՝ Աֆշինը, իր բանակին հրամանատարը, զրկեց Էսթէֆանային նուէրներով, եւ անոնք առին Բարակը եւ սպանեցին։ Որովհետեւ այս մարդը ընաճնջած էր աւելի քան հարիւր հազար արարական զօրքեր»։

Նախ նկատի առնենք որ 829ին Բար Հերրայուսի առաջին վկայութեան առաջին մասին պատմութիւնը կը կատարուի 829ին։ Այդ ատեն, այսինքն 829ին, աղանդաւորներուն գլխաւորը Բարակն էր՝ իբր Մահդին։ Բարակ 817էն ի վեր առաջնորդն էր աղանդաւորներուն։ Բար Հերրայուս Բարակ-Մահդի հետեւող աղանդաւորները նախ կը կոչէ Քուրտանայաններ, իսկ երկրորդին մէջ կը կոչէ իսկական անուամբ՝ Խառնաղմիկներ։ Սակայն տեսնենք որ Միքայէլ Ասորի ալ զանոնք Քուրտանի, Քուրտանս, եւն. ձեւով կը կոչէ։ Ուրեմն Քուրտանի, Քուրտանայէ ալ կոչուել են այս աղանդաւորները, եթէ սակայն աղբիւրը, որմէ օգտուած կ'երեւան Բար Հերրայուս եւ Միքայէլ Ասորի՝ աղաւղուած չէ Խառնաղմիկը Քուրտանի վերածուած։